

Առաջադրանքի պայմաններ և ծառայությունների շրջանակ
W2 ծրագրով արդեն ընտրված շահառուների համար վերահսկողության, մոնիտորինգի և
մենթորության իրականացում (II Փուլ), IRFSP/TA/CQS-2020/002

I. Հակիրճ նկարագիր

ՀՀ կառավարությունը, համագործակցելով ԳՉՄՀ-ի հետ, ձեռնարկել է «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիրը» (ԵԳՖԱԾ), որի նպատակն է բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական կարգավիճակն ընտրված գյուղական տարածքներում, որտեղ աղքատությունը տարածված է, հետևյալ ուղիներով. (i) փոքրածավալ տնտեսությունների արտադրողականության, հետարտադրական գործընթացների արդյունավետության բարձրացում և անցում բարձրարժեք մշակաբույսերի աճեցմանը, (ii) գյուղմթերքներ վերամշակող կազմակերպությունների և գյուղացիական փոքր ու աղքատ տնտեսությունների միջև կապի հաստատում՝ նրանց համար հասանելի դարձնելով տեղական ու միջազգային շուկաները և ստեղծելով զբաղվածության հնարավորություններ աշտեշոթայի շրջանակում, (iii) տեղումների մակարդակի տատանումների նկատմամբ գյուղատնտեսական արտադրական համակարգերի ճկունության բարելավում և (iv) սննդի անվտանգության բարելավում՝ ապահովելով գյուղատնտեսական արտադրանքի և ընտանեկան առողջապահության որակի բարձրացում՝ տնային տնտեսությունների ջրամատակարարման բարելավման միջոցով:

Ծրագիրը ներառում է 4 հիմնական բաղադրիչ. (i) Գյուղական ֆինանսավորում, (ii) Գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներ, (iii) Ֆերմերների իրազեկում և աջակցություն, (iv) Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում:

- **Գյուղական ֆինանսավորում բաղադրիչը** վերաֆինանսավորման կապիտալ և բաժնեմասնակցային ներդրումներ է տրամադրում փոքր հողատերերին և ՓՄՁ-ներին՝ արտադրական գործունեությունը բարելավելու, ակտիվացնելու և եկամուտները բարձրացնելու նպատակով:
- **Գյուղական տարածքների ջրամատակարարման ենթակառուցվածքներ (ԳՏՁԵ) բաղադրիչն** ուղղված է գյուղական համայնքներում կենցաղային և ոռոգման ջրի հասանելիության բարելավման պահանջին:
- **Ֆերմերների իրազեկում և աջակցություն և Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում բաղադրիչները** թիրախավորում են ֆերմերներին՝ հողերի կայուն կառավարման համակարգերում, տեխնոլոգիաներում և կարողությունների զարգացման ոլորտում ներդրումների միջոցով:

II. Ծրագրի հակիրճ նկարագիր

Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում բաղադրիչը ֆինանսավորվում է ՌԳ-լոբալ Էկոլոգիական հիմնադրամի՝ կողմից (ԳԷՀ ՀԱԱՈւՀԿԿ), որն իր մասնակցությունն է բերել ԵԳՖԱ ծրագրին՝ բարձրացնելու Հայաստանի ռիսկային տարածքներում գյուղական համայնքների ընդհանուր ճկունությունը՝ (i) թիրախային հանդիսացող բարձրարժեք ագրոանտառային և բանջարաբոստանային մշակաբույսերի մշակության ոլորտում հողի ու ջրի պահպանման միջոցների ինտեգրման և (ii) ծրագրի համայնքային տարածքներում հողերի դեգրադացման և կլիմայական ռիսկերի նկատմամբ ագրո-էկոհամակարգերի և գյուղական բնակչության ճկունության վերականգնման նպատակով: ԳԷՀ ՀԱԱՈւՀԿԿ բաղադրիչի ռազմավարությունը հիմնվում է ԵԳՖԱԾ-ի ելակետային ծրագրի վրա և ներառում է հետևյալ առանցքային ուղղությունները.

- Ներդրումներ կայուն գյուղատնտեսական համակարգերում, որոնք օգուտ են քաղում վերականգնված ենթակառուցվածքներից,
- Լանդշաֆտների վերականգնման միջոցով համայնքային հողերի դեգրադացման կանխարգելում:

Ներդրումներ կայուն գյուղատնտեսական համակարգերում և տեխնոլոգիաներում բաղադրիչը (i) հիմնականում կկիրառի կլիմայի փոփոխությունների նկատմամբ կայուն տեխնոլոգիաներ ելակետային ծրագրով վերականգնված երրորդային ոռոգման համակարգերում և (ii) կաջակցի մարզինալ հողերի փոխարկմանը կլիմայական ռիսկերի նկատմամբ ճկուն գյուղատնտեսական հողերի, որոնք կառավարվում են արդյունավետ ոռոգման տեխնոլոգիաներով և հողի ու ջրի պահպանման ագրոնոմիական համակարգերով: Առավելապես ոռոգման ջրով ապահովված լինելու արդյունքում բարձրարժեք բանջարաբոստանային մշակաբույսերի բազմազանացման շնորհիվ է, որ կանանց կողմից ղեկավարվող, երիտասարդ և աղքատ տնային տնտեսությունները կարող են դառնալ ավելի ճկուն, կանխել հողերի քայքայումը և նվազեցնել կլիմայական ռիսկերը, ինչն ազդում է ինչպես մարդկանց կյանքի, այնպես էլ ունեցվածքի վրա: Գյուղատնտեսական արտադրանքի ոլորտում իրականացված ելակետային աշխատանքների կայունությունը բարելավու նպատակով մշակվել են ֆինանսավորման երկու տարբերակներ (պատուհաններ), որոնք ուղղված են բազմազանացմանը և պարենային ապահովությանը, ինչպես նաև գյուղատնտեսական համակարգերի զարգացմանը:

Ապրուստի միջոցների բազմազանությունը կարևոր նախապայման է ռիսկերի նվազեցման, ճկունության ստեղծման և պարենային ապահովության համար: Բազմազանացման հնարավոր ազդեցությունն ու օգուտները բազմաթիվ են. (i) կլիմայի հետ կապված և այլ ռիսկերի բաշխում տարբեր մշակաբույսերի միջև, (ii) բանջարեղենի արտադրական սեզոնի երկարաձգում վաղ գարնանից մինչև ուշ աշուն, ինչը կրերի արտադրության ծավալների և եկամուտների աճ, (iii)

կարողությունների զարգացում արտադրության, վերամշակման և շուկայավարման ոլորտում և (iv) ապրանքների լայն տեսականու ստեղծում, ինչն առավելագույնս կարտացոլի ծրագրի թիրախային լեռնային շրջանների արտադրական ներուժը:

Խոցելի տարածքներում հողերի դեգրադացումը և կլիմայական ռիսկերը մեղմելու արդյունավետ գործիք լինելուց բացի, այս ծրագիրը հիմք է նախապատրաստում սննդառության ապահովության բարձրացման, ինչպես նաև աղքատության ու խոցելի բնակչության տնտեսական մարզինալության դեմ պայքարի համար՝ նպատակաուղղված լինելով կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններին, երիտասարդ ֆերմերներին և խոցելի խմբերին:

Այս համատեքստում նախատեսվում է տրամադրել փոքրածավալ դրամաշնորհներ (ստարտափ փաթեթներ) և համակցված ֆինանսական պրոդուկտներ խոցելի խմբերին (կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսություններ, երիտասարդ ֆերմերներ և աղքատ տնային տնտեսություններ) և փոքր ֆերմերներին, որոնք պատրաստ են ընտրված տարածքներում որդեգրել հողի պահպանման սկզբունքների վրա հիմնվող կայուն գյուղատնտեսական գործելակերպ: Ուստի, ենթաբաղադրիչը կունենա երկու պատուհան՝ **Պատուհան 1) Բազմազանացման և պարենային ապահովության ծրագիր** (ԲՊԱԾ՝ ստարտափ փաթեթներ) և **Պատուհան 2) Կայուն գյուղատնտեսական ծրագիր** (ԿԳԾ՝ Համակցված ֆինանսական պրոդուկտներ):

III. Ստարտափ փաթեթներ

Պատուհան 1-ի շրջանակում ստարտափ փաթեթները կհատկացվեն ընտրված անհատներին կամ խմբերին (նույն տնային տնտեսությունը չի կարող Ծրագրից ստանալ մեկից ավելի փաթեթ): Պատուհան 1-ի շահառուները կստանան շուրջ 3,000 ԱՄՆ դոլար գումարով փաթեթներ, և պետք է տրամադրեն սեփական ոչ դրամական ներդրում՝ դրամաշնորհի 10 %-ի չափով:

Յուրաքանչյուր ստարտափ փաթեթ կարող է ներառել հետևյալ ուղղություններից որևէ մեկը կամ դրանց համադրությունը.

- Մեղվապահություն նրանց համար, ովքեր չունեն մեղվափեթակներ, կամ դրանց քանակը չի գերազանցում 50-ը: Փաթեթը ներառում է մեղուների և փեթակների տրամադրում:
- Մրգի էլեկտրական փոքր չորանոցներ (հզորություն՝ 150 կգ, էներգիայի քիչ օգտագործում՝ 5 կՎտ*ժ) և քամու չորանոցներ:
- Բանջարեղենի և պտղի կայուն արտադրություն (լոլիկ, վարունգ, պղպեղ, սմբուկ, սխտոր, հատապտուղներ և սունկ), ներառյալ՝ բանջարեղենի արտադրության համար անհրաժեշտ թունեկային տիպի փոքրածավալ ցածր ջերմոցներ, այգիների հիմնում կամ սպասարկում (փոքր գործիքներ և տեխնիկա, տնկիներ):

Ստարտափ փաթեթները (շուրջ 700,000 ԱՄՆ դոլար արժողությամբ) մատակարար(ներ)ի կողմից (որոնց հետ ԳՏՏԶ ԾԻԳ-ը պայմանագրեր կկնքի) շահառուներին կտրամադրվեն որպես ոչ դրամական ներդրում: Շահառուներն ուղղակիորեն կստանան ոչ թե դրամաշնորհային ֆինանսավորում, այլ այն ապրանքները, սարքավորումները և այլ հիմնական միջոցները, որոնց համար դրամաշնորհային ֆինանսավորման հայտ են ներկայացրել խորհրդատուի/ծառայություն մատուցողի հետ խորհրդակցելու արդյունքում:

Ստարտափ փաթեթների նկարագրությունն ու իրականացումը, այդ թվում՝ (i) Թիրախային բնակավայրերը, (ii) Թիրախային ուղղությունները, (iii) Դրամաշնորհների բնութագրերը, (iv) Դրամաշնորհի տրամադրման կարգը, ներառյալ՝ հստակ գործողությունները, (v) Դիմումի մերժման գործընթացները մանրամասն ներկայացված են «Ֆինանսավորման փաթեթների մշակում, մշակված փաթեթների վերաբերյալ ֆերմերների իրազեկության բարձրացում և գյուղատնտեսական ու ֆինանսական ուսուցման իրականացում» զեկույցում:

Հաստատված դրամաշնորհային հայտերի և ստարտափ փաթեթների նախագծման ու մշակման հիման վրա ԳՏՏԶ ԾԻԳ-ը կհայտարարի մրցույթ շահառուներին ստարտափ փաթեթների մատակարարման, հանձնման, հավաքման/տեղադրման և փորձարկման համար:

Դրամաշնորհը կարող է օգտագործվել բացառապես այն իրերի, ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար, որոնք հստակ չափելի և փաստաթղթավորված են:

IV. Աշխատանքներ

Խորհրդատու/ծառայություն մատուցողը կարևոր դեր կխաղա կայուն գյուղատնտեսական համակարգերում և տեխնոլոգիաներում ներդրումների իրականացման միջոցառումներում՝ փոխգործակցային կապեր ստեղծելով ծրագրային աշխատանքների միջև: ԳՏՏԶ ԾԻԳ-ի հետ լիարժեք համաձայնեցմամբ և վերջինիս հաստատմամբ՝ խորհրդատու/ծառայություն մատուցողը պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

Ա. Մատակարարման/տեղադրման վերահսկողություն և մոնիտորինգ

ա. Քանի որ ստարտափ փաթեթներն ուղղակիորեն ձեռք կբերվեն ԳՏՏԶ ԾԻԳ-ի կողմից (այսինքն՝ խորհրդատու/ծառայություն մատուցողը ձեռք ՉԻ բերելու ստարտափ փաթեթներ), խորհրդատուի/ծառայություն մատուցողի պարտականությունները կներառեն յուրաքանչյուր շահառուի տնտեսությունում ստարտափ փաթեթի մատակարարման և տեղադրման վերահսկողությունը՝ տեխնիկական բնութագրերին և նախագծին ընդհանուր առմամբ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Խորհրդատու/ծառայություն մատուցողը մատակարարի հետ միասին պետք է ապահովի, որ ստարտափ փաթեթները յուրաքանչյուր տնային տնտեսությանը հանձնվեն առանձին, իսկ հանձնման ակտը ստորագրեն շահառուն, մատակարարը և խորհրդատու/ծառայություն մատուցողը:

բ. Ըստ անհրաժեշտության՝ ստարտափ փաթեթների օգտագործման, շահագործման և պահպանման վերաբերյալ մատակարար(ներ)ի կողմից շահառուների համար անցկացվող ուսուցման վերահսկում:

գ. ԳՏՏԶ ԾԻԳ-ի կողմից ստարտափ փաթեթների գնումների գործընթացի ավարտից հետո խորհրդատուն/ծառայություն մատուցողը կհավաստի՝ արդյոք մատակարարները կատարել են համապատասխան պայմանագրերով ստանձնած իրենց պարտավորությունները, թե ոչ:

դ. Շահառուների հետ կանոնավոր հաղորդակցություն՝ տվյալների հավաքագրման և մոնիտորինգի նպատակով:

Բ. Մենթորություն

ա. Շահառուներին տեխնիկական աջակցության տրամադրում (քուլչինգ, մենթորություն).

բ. Յուրաքանչյուր շահառուի համար արտադրական ցիկլի ընթացքում աշխատանքային պայմաններում անհատական ուսուցման (քուլչինգ) անցկացում՝ ըստ կարիքի և պահանջի:

Գ. Հաշվետվությունների ներկայացում

ա. Առաջադրանքի կատարման վերաբերյալ հանգամանալից վերջնական հաշվետվության, ներառյալ՝ ստարտափ փաթեթների իրականացման արդյունքների մասին տեղեկությունների տրամադրում:

Խորհրդատուն/ծառայություն մատուցողը չի կարող մեկ փուլից մյուսին անցնել նախքան ԳՏՏԶ ԾԻԳ-ից անվերապահ հաստատում ստանալը:

V. Տևողություն, ներկայացման ենթակա փաստաթղթեր և ժամկետներ

Առաջադրանքի տևողությունն 9 ամիս է (2022 թվականի հունվար-սեպտեմբեր): Ստորև նշվում են ներկայացման ենթակա հիմնական փաստաթղթերի ցանկը և ժամկետները.

Ներկայացման ենթակա փաստաթուղթ	Ներկայացման ժամկետ (մեկնարկից սկսած)
Վերահսկողության և մոնիտորինգի հաշվետվություններ (հայերեն՝ անգլերեն ամփոփագրով)	Եռամսյակային կտրվածքով՝ հանձնման/տեղադրման հետ միաժամանակ
Վերջնական հաշվետվություն (անգլերեն և հայերեն)	9 ամիս

Պահանջվող հաշվետվությունները, ըստ անհրաժեշտության, կարող են ճշգրտվել ԳՏՏԶ ԾԻԳ-ի հետ նախապես ձեռք բերված փոխհամաձայնության և առարկության բացակայության դեպքում: Սույն առաջադրանքի ընթացքում խորհրդատուն/ծառայություն մատուցողն ուղղակիորեն հաշվետու կլինի ԳՏՏԶ ԾԻԳ-ի կողմից լիազորված Համակարգողին: Ի լրումն Սերկայացման ենթակա փաստաթղթերում նշված հաշվետվության պահանջների՝ խորհրդատուն/ծառայություն մատուցողը պետք է տրամադրի ամսական առաջընթացի ամփոփ հաշվետվություններ, որոնցում ներկայացված կլինեն ընթացիկ և նախատեսվող ծրագրված աշխատանքների կարգավիճակը, ինչպես նաև ծագած խնդիրները՝ առաջարկվող լուծումների հետ միասին:

Անհրաժեշտության դեպքում ԳՏՏԶ ԾԻԳ-ի պաշտոնական պահանջով խորհրդատուի/ծառայություն մատուցողի՝ Ծրագրի իրականացմանն առնչվող գործունեությունը պետք է անցնի աուդիտ: Վերոնշյալ հաշվետվությունները ներառում են ներկայացման ենթակա բոլոր փաստաթղթերը:

Խորհրդատուն/ծառայություն մատուցողը պետք է կիրառի ժամանակակից տեխնոլոգիաներ և տեղեկատվական համակարգեր մոնիտորինգի, վերահսկողության, աջակցության, տվյալների հավաքագրման և այլ աշխատանքների կատարման ընթացքում:

VI. Փորձագետներ

Խորհրդատուն պետք է ներգրավի հետևյալ հիմնական փորձագետներին.

Ա. Թիմի ղեկավար

- ա. Առնվազն 15 տարվա ընդհանուր մասնագիտական փորձ.
- բ. Ծրագրերում թիմերի կառավարման առնվազն 5 տարվա փորձ.
- գ. Հայաստանի գյուղական վայրերում աղքատ բնակչությանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման առնվազն 7 տարվա փորձ.
- դ. Դոնորների կողմից ֆինանսավորվող ծրագրերի կառավարման փորձ.
- ե. Անգլերենի և հայերենի գերազանց իմացություն.
- զ. Հաղորդակցման, համակարգման, առաջնորդության և խնդիրների լուծման գերազանց հմտություններ.
- է. Առնվազն մագիստրոսի կամ համալսարանական համարժեք աստիճան համապատասխան բնագավառում:

Բ. Մոնիտորինգի և գնահատման մասնագետ

- ա. Առնվազն 5 տարվա ընդհանուր մասնագիտական փորձ.

բ. Առնվազն 5 տարվա փորձ Հայաստանում ծրագրերի մոնիտորինգի և գնահատման ոլորտում, նախընտրելի է թիրախային ստարտափ փաթեթների բնագավառում (օրինակ՝ կայուն գյուղատնտեսություն, մեղվապահություն, բանջարեղենի/պտղի արտադրություն, թունելային տիպի փոքրածավալ ցածր ջերմոցներ, մրգի փոքր չորանոցներ, կաթիլային ոռոգում և այլն), ինչպես նաև աղքատ բնակիչների և նրանց խմբերի հետ աշխատանքի ոլորտում: Վերոնշյալ բոլոր բնագավառներում առկա փորձը միանշանակորեն կդիտվի որպես առավելություն

գ. Հայաստանի գյուղական վայրերում աշխատելու առնվազն 5 տարվա փորձ.

դ. Հայերենի գերազանց իմացություն, անգլերենի լավ իմացությունը կդիտվի որպես առավելություն.

ե. Առնվազն մագիստրոսի կամ համալսարանական համարժեք աստիճան համապատասխան բնագավառում:

Բացի այդ, խորհրդատուն/ծառայություն մատուցողը պետք է ներգրավի անհրաժեշտ որակավորմամբ և թվով կարճաժամկետ փորձագետների՝ ծրագրի հաջող իրականացումն ապահովելու համար: Անհրաժեշտության դեպքում կարճաժամկետ հիմունքներով պետք է ներգրավվեն առնվազն հետևյալ մասնագետները.

- Ագրոպարենային/ագրոնոմիական շուկայի մասնագետներ.
- Համապատասխան բնագավառների ինժեներներ:

Գնահատման չափանիշներ

- Խորհրդատուները վերջին հինգ տարիների ընթացքում պետք է ունենան համապատասխան փորձ կառավարման, ՄևԳ, դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորման կառավարման բնագավառում (առավելագույնը 50 միավոր),
- Խորհրդատուները վերջին հինգ տարիների ընթացքում պետք է ունենան Հայաստանի գյուղական վայրերում գյուղատնտեսության և ագրոբիզնեսի ոլորտում արժեշտային զարգացման փոքրածավալ ծրագրերի իրականացման աջակցության փորձ (առավելագույնը 50 միավոր):